ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<23>> ----------07----------2025թ. N ՄՈ/ 719 -Ա

ք. Արմավիր

«ԳԵՂԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՈՒՇ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Անուշ Համբարձումյանի 2025 թվականի հուլիսի 18-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անուշ Համբարձումյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի օգոստոսի 5-ից 25-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր տևողությամբ:
2. Անուշ Համբարձումյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Գեղակերտի միջնակարգ

դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ՝ Նելլի Գևորգյանին:

3. «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Նելլի Գևորգյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի օգոստոսի 5-ից 25-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Անուշ Համբարձումյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 26-ից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-07-23 10:10:31 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ